

է թէ Սարգիս Արքեպ. սրտին մէջն է. եւ ինչպէս որ Աղեքսանդր Եպիսկոպոսին գործը կարգադրեց, կը յուսայնոյնպէս կարգի դնել Պրուսայի Եպ.ին գործը, եւ յետոյ Սարգիս Արքեպ ին գործին պիտի նայի, որ արժանի է ամենայն խնամոց: Տուրացցոյի Արքեպ.ը կը գրէ նաեւ՝ թէ անոր (Սարգսի) մասին գրեւր են որ վենետիկ պիտի երթայ կղերիկոս ձեռնադրելու, եւ թէ հարուստ է՝ 20.000 զր. ունի. սակայն Մօնս. Պօրճիա պաշտպաներ է զինք:

Եւ իրօք, ինչպէս 20 Յնր. 1773ին Տուրացցոյի Արքեպ.ը կը գրէ Սարգսին, եւ կը յիշէ Անտոնեան Միարանութեան Մեծաւորն ի Հռոմ՝ Հ. Գրիգոր վ. Նէփօթ իր ժամանակագրութեան մէջ՝ թուական 1773, այս միջոցին Հռոմ Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյն մէջ կը բնակէին կաթողիկոսայ վեց հայազգի եպիսկոպոսուք: Ասոնք են՝ 1. Կ. Պոլսեցի Յակոբ Մեսրոպ քեահեա Արապեան, Արքեպ. Լամբրոնի եւ Տարսոնի, որ 1742էն ի վեր Հռոմ էր: 2. Յովհաննէս Գասպասեան, Արքեպ. Մարտինի: 3. Գրիգոր Արքեպ. Թիֆլիզցի: 4. Աղեքսանդր Արքեպ. Վանայ, ի միաբանից Աղթամարայ: 5. Գաղատացի Սիմոն Եպ. Ումուտեան: Եւ 6. Սամուէլ Եպ. Երզնկացի, Առաջնորդն Պրուսայի: Առաջնոյն վրայ ուրիշ առթիւ կը գրեմ: Վերջնոյն վրայ ընդարձակ տեղեկութիւններ տուի վերը, որոնց վրայ կը յաւելում նաեւ հետեւեալները: Սամուէլ Եպ.ի յօրինած յիշեալ աղօթագրքէն ունի նաեւ Գիւտ քհ. Ա-